

## Գլուխ 14

Մի քանի թեմաներ կային, որոնց Գ.-ն անպայման միշտ անդրադառնում էր պաշտոնական դասախոսություններից հետո, որոնց դրսից մարդիկ էլ կային հրավիրված: Առաջինը ինքդ քեզ հիշելու և սրան հասնելու համար մշտական հետևողական աշխատանքն է սրան հասնելու համար, իսկ երկրորդը մեր լեզվի անկատար լինելու թեման էր կամ էլ «օբյեկտիվ ճշմարտությունը» մեր բառերով փոխանցելը:

Ես արդեն նշել եմ, որ Գ.-ն օգտագործում էր «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» բառերը դրանց յուրահատուկ իմաստ տալով և «օբյեկտիվն» ու «սուբյեկտիվը» տարբերելու հիմք ընդունելով գիտակցական մակարդակը: Այն բոլոր գիտելիքները, որոնք հիմնված են դրանք ուսումնասիրելու, այդ ուսումնասիրությունները ստուգելու սովորական մեթոդների վրա, բոլոր այն հատուկ տեսությունները, որոնց ուսումնասիրության աղբյուր են հանդիսանում այն փաստերը, որոնք բոլորին հասանելի են գիտակցության սուբյեկտիվ մակարդակում, նա անվանում էր *սուբյեկտիվ*: Այն գիտելիքները, որոնք հիմնված էին հինավուրց մեթոդների և հետազոտման մեթոդների վրա, երևույթների մեջ եղած գիտելիքները, գիտելիքները, որոնք գտնվում են «գիտակցության օբյեկտիվ մակարդակում», *Ամեն ինչի գիտելիքը* նա անվանում էր օբյեկտիվ գիտելիք:

Ես կփորձեմ փոխանցել իմ իմացածը այնքան, ինչքան հիշում եմ՝ օգտագործելով Գ.-ի Մոսկվայի ուսանողների և իմ որոշ նշումները Պետերբուրգյան գրույցներից:

- Օբյեկտիվ գիտելիքի ամենակենտրոնական մտքերից մեկը ամեն ինչի միասնության միտքն է, տարբեր բաների միասնությունը: Հին ժամանակներից ի վեր մարդիկ, ովքեր հասկացել են այս մտքի իմաստը և պարունակությունը և այն համարել են օբյեկտիվ գիտելիքի հիմքը, կարողացել են ձեռնամուխ լինել այն հասկանալի կերպով հաղորդել մյուսներին: Օբյեկտիվ գիտելիքների տեր մարդկանց մոտ այդ մտքերի հաջող փոխանցումը մյուսներին միշտ էլ խնդիր է եղել: Նմանատիպ դեպքերում ամեն ինչի միասնականության միտքը միշտ էլ ընկած է եղել է այս գաղափարախոսության հիմքում, որը պետք էր հաղորդել մյուսներին բացարձակ ճշտությամբ և ամբողջությամբ: Մա անելու համար այդ մտքերը պետք է ձևակերպվեն այնպես, որ հավաստեն դրանց՝ մյուսների կողմից ճիշտ ընկալմանը, և խուսափեն որևէ անճշտություն կամ թյուրիմացություն: Այդ իսկ պատճառով, այն մարդկանց հետ, ում պատրաստվում են հաղորդել այդ մտքերը, հատուկ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում, իսկ մտքերը ձևակերպվում էին կամ տրամաբանորեն, օրինակ՝ փիլիսոփայական համակարգի միջոցով, որը փորձում էր «հիմնական սկզբունքի» սահմանումը տալ, կամ ..., որից բխում էր ամեն ինչ, կամ էլ կրոնական ուսմունքների միջոցով, որը փորձում էր վստահության և գիտակցության մթնոլորտ ստեղծել: Երկու միջոցների փորձերն էլ, երբեմն հաջողված, երբեմն՝ ոչ, ներառում են մարդկության պատմությունը ամենավաղ ժամանակաշրջանից մինչև մեր արդիական ժամանակները

և կարծես դարձել են կրոնական և փիլիսոփայական հավատալիքներ, որոնք ասես հուշարձաններ մնացել են այդ փորձերի ճանապարհին, որոնք փորձում են միավորել համամարդկային և էությունիկ մտքերը:

Իսկ օբյեկտիվ գիտելիքը՝ միավորվածության միտքը ներառած, պատկանում է օբյեկտիվ գիտակցությանը: Այն միջոցները, որոնցով փոխանցվում է գիտելիքը, երբ այն ընկալվում է սուբյեկտիվ գիտակցությամբ, անխուսափելիորեն խեղաթյուրվում է և ճշմարտության փոխարեն այն վերացական պատկերացումներ է ստեղծում: Օբյեկտիվ գիտակցության դեպքում հնարավոր է տեսնել և զգալ ամեն ինչի միասնությունը: Իսկ սուբյեկտիվ գիտակցության դեպքում աշխարհը բաժանված է միլիոնավոր տարբեր և առանձին երևույթների: Այս երևույթները ինչ-որ համակարգի մեջ միավորելու փորձերը ոչնչի չեն բերում, քանի որ մարդը չի կարող չնչին փաստերից ելնելով վերարտադրել ամբողջության գաղափարը, ինչպես նաև հնարավոր չէ ամբողջությունը բաժանելու օրենքները կոտակել առանց իմանալու, թե ինչ է ընկած այդ բաժանման հիմքում:

Միասնության գաղափարը ոչ պակաս գոյություն ունի նաև ինտելեկտուալ մտածողության մեջ, բայց բազմազանության հետ ունեցած իր ուղղակի հարաբերությունների պատճառով այն երբեք հնարավոր չէ բառերով կամ տրամաբանորեն բացատրել: Այնտեղ միշտ էլ մնում են լեզվական անհաղթահարելի դժվարությունները: Լեզուն, որը ստեղծվել է սուբյեկտիվ գիտակցության պայմաններում արտահայտելով բազմազանություն տարբերություններ, երբեք ամենայն ճշգրտությամբ և ամբողջությամբ չի կարող փոխանցել այն ամենն, ինչը շոշափելի և ակնհայտ է գիտակցական օբյեկտիվ մակարդակում:

Գիտակցելով լեզվի անկատար և անբավարար լինելը՝ մարդիկ, ովքեր տիրապետում են օբյեկտիվ գիտելիքին, միասնության գաղափարը բացատրել են «միֆերի» և «սիմվոլների» միջոցով, մասնավորապես՝ «բառային բանաձևերով», որոնք առանց արտասանվելու փոխանցվել են մեկ դպրոցից մյուսին և երբեմն էլ մեկ դարաշրջանից մյուսը:

Արդեն ասվել է, որ բարձր հոգեկան կենտրոնները գործում են մարդու գիտակցության բարձր մակարդակներում՝ բարձր էմոցիոնալ և բարձր մտավոր: «Միֆերի» և «սիմվոլների» նպատակն էր հասնել մարդու վերին կենտրոններին, նրան հաղորդել այն մտքերը, որոնք հասանելի չեն ինտելեկտին, և այդ մտքերն այնպես հաղորդել, որպեսզի բացառել դրանք սխալ ընկալելու որևէ հնարավորություն: «Միֆերը» նախատեսված են բարձր էմոցիոնալ կենտրոնի համար, «սիմվոլները»՝ մտավոր կենտրոնի: Դրա շնորհիվ է, որ բոլոր այն փորձերը հասկանալու կամ բացատրելու համար «միֆերը» և «սիմվոլները» կամ այն բանաձևերը և արտահայտությունները, որոնք փորձում են վերջնական տեսքի բերել դրանց պարունակությունը, ի սկզբանե դատապարտված են անհաջողության: Միշտ էլ հնարավոր է ամեն ինչ հասկանալ, բայց միայն ճիշտ կենտրոնի շնորհիվ: Սակայն օբյեկտիվ գիտելիք ստանալու համար նախապատրաստական աշխատանք պետք է կատարվի ուղեղի հետ, քանի որ միայն լավ նախապատրաստված ուղեղը կարող է ճիշտ փոխանցել այս մտքերը բարձր կենտրոններին առանց օտար մասեր ներառելու:

դրանցում: Այս նպատակով մարդկանցից, ում փոխանցում էին գաղափարը, պահանջում էին լավ նախապատրաստում, և հենց միտքնՔ ինքը կամ ունենում էր տրամաբանական ձև, օրինակ՝ փիլիսոփայական համակարգերում, որոնք փորձում էին տալ “ֆունդամենտալ օրենքի” սահմանումը, կամ նրանից, ինչից սկիզբ էր առնում մնացածը, կամ դրվում էր կրոնական ուսմունքներում, որոնք փորձում էին հավատի տարր ստեղծել և զգացմունքի ալիք բարձրացնել՝ մարդկանց տանելով դեպի “օբյեկտիվ գիտակցության” մակարդակ:

Մեկի և մյուսի ջանքերը, երբեմն՝ ավելի շատ, երբեմն՝ ավելի քիչ հաջողված, ձգվում են մարդկային գոյության ամբողջ պատմության ընթացքում՝ ամենահին ժամանակներից մինչ մեր օրերը, և դրանք վերափոխվել են կրոնական և փիլիսոփայական համոզմունքների, որոնք այս ջանքերի գործադրման ճանապարհին միշտ եղել են կանգուն, ինչպես հուշարձաններ՝ միավորելու համար մարդկային և էզոտերիկ միտքը:

“Բայց օբյեկտիվ գիտելիքը, միասնության գաղափարը ներառած, պատկանում է օբյեկտիվ գիտակցությանը: Այս գիտելիքը արտահայտող ձևերը, եթե դիտարկենք սուբյեկտիվ գիտակցության տեսանկյունից, անխուսափելիորեն աղավաղված են, և ճշմարտության փոխարեն, դրանք ստեղծում են ավելի ու ավելի շատ պատրանք:

Օբյեկտիվ գիտակցությամբ հնարավոր է տեսնել և զգալ ամեն ինչի ամբողջությունը: Իսկ սուբյեկտիվ գիտակցության մեջ աշխարհը բաժանված է միլիոնավոր անջատ և ինքնուրույն երևույթների: Գիտականորեն կամ փիլիսոփայորեն այս երևույթները ինչ-որ համակարգում միավորելու ջանքերը ոչ մի արդյունքի չեն բերում, քանի որ մարդը, առանձին փաստերից սկսելով, չի կարող վերականգնել ամբողջության գաղափարը, և դրանք չեն կարող ենթադրել ամբողջության բաժանման սկզբունքները՝ առանց իմանալու այն օրենքները, որոնց վրա հիմնված է այս բաժանումը:

Այնուամենայնիվ, ամեն ինչի միասնության գաղափարը գոյություն ունի նաև ինտելեկտուալ մտքում, բայց, բազմազանության հետ հարաբերության մեջ, այն երբեք չի կարելի պարզորեն արտահայտել բառերով կամ տրամաբանորեն: Միշտ կա լեզվի անհաղթահարելի դժվարությունը: Լեզուն, որը կառուցվել է գիտակցության սուբյեկտիվ վիճակում բազմաքանակության և բազմազանության տպավորությունները արտահայտելու համար, երբեք բավականաչափ ամբողջությամբ և հստակությամբ չի կարող փոխանցել ամբողջականության գաղափարը, որը հասկանալի է և ցայտուն ենթագիտակցության օբյեկտիվ վիճակում:

Հասարակ լեզվի անկատարելիությունը և թուլությունը գիտակցելով՝ մարդիկ, ովքեր ունեցել են օբյեկտիվ գիտելիք, փորձել են միասնության գաղափարը արտահայտել «առասպելներում» և «սիմվոլներում» և հատուկ «խոսքային բանաձևերում», որոնք, առանց փոփոխությունների փոխանցվելով, գաղափարը փոխանցել են մի դպրոցից մյուսը, հաճախ մի դարաշրջանից՝ մյուսը:

Արդեն ասվել է, որ ավելի բարձր հոգեկան կենտրոնները աշխատում են մարդու գիտակցության ավելի բարձր վիճակներում՝ «ավելի բարձր էմոցիոնալ» և «ավելի բարձր

մտավոր»: «Առասպելների» և «սիմվոլների» նպատակն էր հասնել մարդու ավելի բարձր կենտրոններին, նրան փոխանցել այն մտքերը, որոնք անհասանելի են բանականությանը, և այնպես փոխանցել, որ դրանք բացառեն կեղծ մեկնաբանության հավանականությունը: «Առասպելները» նախասահմանված էին ավելի բարձր էմոցիոնալ կենտրոնի համար, «սիմվոլները»՝ ավելի բարձր մտավոր կենտրոնի համար: «Առասպելները» և «սիմվոլները» գաղափարապես հասկանալու կամ բացատրելու բոլոր ջանքերի առաքինությունը կամ դրանց բովանդակության ամփոփումը տվող բանաձևերը կամ արտահայտությունները նախապես ենթակա են ձախողման: Ամեն ինչ միշտ հնարավոր է հասկանալ, բայց միայն համապատասխան կենտրոնի միջոցով: Բայց օբյեկտիվ գիտելիքի գաղափարները ընդունելու նախապատրաստում պիտի անցնի մտքի միջով, և միայն պատշաճ կերպով նախապատրաստված միտքը կարող է ավելի բարձր կենտրոններ փոխանցել այս գաղափարները՝ առանց այդ կենտրոններին օտար տարրեր ներկայացնելու:

Այն սիմվոլները, որոնք օգտագործվում էին օբյեկտիվ գիտելիքին պատկանող գաղափարները փոխանցելու համար, պարունակում էին տիեզերքի հիմնական օրենքների բնութագիծը և դրանք փոխանցում էին ոչ միայն գիտելիքը, այլև ցուցադրում էին դրան տանող ճանապարհը: Սիմվոլների, նրանց կառուցվածքի և նշանակության ուսումնասիրությունը կազմում էր օբյեկտիվ գիտելիքի ստացման նախապատրաստման շատ կարևոր մասը և ինքնին հանդիսանում էր փորձարկում, քանի որ սիմվոլների բառացի կամ ձևական անմիջապես ըմբռնումը անհնարին էր դարձնում հետագա որևէ գիտելիքի ընդունումը:

Սիմվոլները բաժանվում էին հիմնական և երկրորդական խմբերի. առաջինը պարունակում էր գիտելիքի առանձին մասերի սկզբունքները, երկրորդը արտահայտում էր երևույթների հիմնական բնույթը՝ միասնության համեմատ:

Շատ սիմվոլների բովանդակության ամփոփումը տվող բանաձևերի մեջ կար մեկը, որն է ուներ յուրահատուկ կարևորություն, դա «Ինչպես վերևում, այնպես էլ ներքևում» բանաձևն է Հերմես Տրիսմեգիստոսի «Չմրուխտե հաբերից»: Այս բանաձևը հավաստում էր, որ տիեզերքի բոլոր օրենքները կարելի է գտնել աստմի մեջ կամ յուրաքանչյուր այլ երևույթում, որը գոյություն ունի որպես որոշակի օրենքներով սահմանված որևէ բան: Այս նույն նշանակությունը կա «միկրոտիեզերքը մարդ է և մակրոտիեզերքը տիեզերք է» անալոգիայի մեջ: Եռյակների և ությակների հիմնական օրենքները պարունակում են ամեն ինչ և պետք է միաժամանակ ուսումնասիրվեն և՛ աշխարհում, և՛ մարդու մեջ: Բայց մարդը, ինքն իր հետ համեմատած, ուսումնասիրության և գիտելիքի ավելի մոտ և մատչելի օբյեկտ է, քան նրանից դուրս երևույթների աշխարհը: Հետևաբար, ձգտելով դեպի տիեզերքի ճանաչմանը, մարդը պետք է սկսի ուսումնասիրել ինքն իրեն և իր մեջ իրականացնել հիմնական օրենքները:

Այս տեսանկյունից կա մեկ ուրիշ բանաձև: “Ճանաչի՛ր ինքդ քեզ” գաղափարը լի է հատուկ խորը իմաստով և հանդիսանում է դեպի ճշմարտության ճանաչումը տանող սիմվոլներից մեկը: Աշխարհի և մարդու ուսումնասիրությունները կօգնեն միմյանց: Աշխարհը և նրա օրենքները ուսումնասիրելով՝ մարդը ուսումնասիրում է ինքն իրեն, և

ինքն իրեն ուսումնասիրելով՝ նա ուսումնասիրում է տիեզերքը: Այս տեսանկյունից ամեն մի խորհրդանշան մեզ ինչ-որ բան է սովորեցնում մեր մասին:

Խորհրդանշանների ճանաչմանը կարելի է մոտենալ հետևյալ կերպ. երևույթների աշխարհը ուսումնասիրելիս մարդը, նախ և առաջ, ամեն ինչի մեջ տեսնում է երկու սկզբունքների դրսևորում՝ մեկը մյուսին հակառակ, որոնք, միասնականության կամ հակադրության մեջ, տալիս են այս կամ այն արդյունքը, այսինքն՝ արտացոլում են այն սկզբունքների հիմնական բնույթը, որոնք ստեղծել են նրանց: Երկակիության և եռակիության հիմնական օրենքների դրսևորումը մարդը միաժամանակ տեսնում է և՛ տիեզերքում, և՛ իր մեջ: Բայց տիեզերքի հետ համեմատ՝ նա պարզապես հանդիսատես է և, ավելին, մեկը, ով տեսնում է միայն երևույթների մակերեսը, որոնք շարժվում են տարբեր ուղղություններով, չնայած նրան թվում է, թե դրանք շարժվում են նույն ուղղությամբ: Բայց իր հետ համեմատած՝ երկակիության և եռակիության օրենքների իր ընկալումը կարող է արտահայտվել գործնական ձևով, այսինքն՝ ինքն իր մեջ հասկանալով այս օրենքները՝ նա կարող է, այսպես ասած, սահմանափակել երկակիության և եռակիության օրենքների դրսևորումը՝ դեպի ինքնաճանաչումը տանող մշտական պայքարի ճանապարհին: Այս ձևով նա կներկայացնի կամքի դրսևորում նախ ժամանակի ցիկլում, և, այնուհետև, հավերժության ցիկլում, որի ավարտը նրա մեջ կստեղծի այն մեծ խորհրդանշանը, որը հայտնի է Սողոմոնի կնիք անվամբ:

Սիմվոլների նշանակության փոխանցումը այն մարդուն, որը չի հասել դրանց ճանաչմանը, ինքնին անհնարին է: Սա պարադոքսի նման է հնչում, բայց սիմվոլի նշանակությունը և դրա էության բացահայտումը կարելի է տալ և կարող է հասկացվել միայն նրա կողմից, ով, այսպես ասած, արդեն գիտի, թե ինչ է պարունակում այդ սիմվոլը: Եվ, այնուհետև, նրա համար սիմվոլը դառնում է իր գիտելիքի սինթեզը և իր համար ծառայում է որպես իր գիտելիքն արտահայտելու և փոխանցելու միջոց այնպես, ինչպես դա ծառայում է այն մարդուն, ով ստեղծել է այն: «Ավելի հասարակ սիմվոլներ

#### Նկար 43

կամ 2, 3, 4, 5, 6 համարները, որոնք արտահայտում են դրանք, մարդու ներքին զարգացման համար պարունակում են մի որոշակի նշանակություն. դրանք ցույց են տալիս մարդու ինքնակատարելության ուղղու տարբեր փուլերը և նրա աճը:

Մարդը՝ նորմալ, իր բնական վիճակում, դիտարկվում է որպես երկակիություն: Նա ամբողջությամբ կազմված է երկակիություններից կամ «հակադրությունների զույգերից»: Մարդու բոլոր զգացողությունները, տպավորությունները, զգացմունքները, մտքերը բաժանված են դրականի և բացասականի, օգտակարի և վնասակարի, անհրաժեշտի և ոչ անհրաժեշտի, լավի և վատի, հաճելիի և տհաճի: Կենտրոնների աշխատանքը ընթանում է այս բաժանման նշանների ներքո: Մտքերը հակադրվում են զգացմունքների հետ: Շարժվող իմպուլսները հակադրվում են հանգստի բնագոյային տենչին: Երկակիությունից է ընթացք տրվում բոլոր զգայական ըմբռնումներին, բոլոր ռեակցիաներին, մարդու ամբողջ կյանքին: Յուրաքանչյուր մարդ, որքան էլ քիչ ուսումնասիրի ինքն իրեն, տեսնում է այս երկակիությունը իր մեջ: Բայց այս

երկակիությունը կարող է փոփոխվող թվալ. այն, ինչ հաղթում է այսօր, անհետանում է վաղը, այն, ինչ ուղղորդում է մեզ այսօր, վաղը դառնում է երկրորդական կամ ստորադաս: Եվ ամեն ինչ հավասարաչափ մեքենայական է, հավասարաչափ անկախ կամքից և հավասարաչափ ոչ մի նպատակի չի տանում: Մարդու մեջ երկակիության ընկալումը սկսում է մեքենայականության և տարբերության գիտակցմամբ, թե ինչն է մեքենայական և ինչն է գիտակից: Դրա ընկալմանը պիտի հաջորդի ինքնախաբեության ոչնչացումը, որում մարդը ապրում է, ով նույնիսկ իր ամենամեքենայական գործողությունները համարում է կամային և գիտակից, իսկ իրեն համարում է միայնակ և ամբողջական:

Երբ ինքնախաբեությունը ոչնչանում է և մարդը սկսում է իր մեջ տեսնել մեքենայականի և գիտակցականի տարբերությունը, սկսվում է գիտակցության իրականացման և մեքենայականը գիտակցին ստորադասելու պայքարը: Այս նպատակով մարդը սկսում է հստակ որոշումներ կայացնել, որոնք գալիս են գիտակից դրդապատճառներից, և դեմ են երկակիության օրենքներով ընթացող մեքենայական գործընթացներին: Երրորդ մշտական սկզբունքի ստեղծումը մարդու համար հանդիսանում է երկակիության փոխանցումը եռակիության:

Ուժեղացնելով այս որոշումը և մշտապես ու անսխալաբար բերելով այն բոլոր դեպքերում, որտեղ նախկինում պատահական չեզոքացնող «ցնցումները» գործում էին և պատահական արդյունքներ տալիս՝ ժամանակի ընթացքում տալիս է արդյունքների մշտական շարք և հանդիսանում է եռակիության փոխակերպումը քառակիության: Հաջորդ փուլը՝ քառակիության փոխակերպումը հնգակիության և պենտագրամի կառուցումը, ոչ թե մեկ, այլ մի քանի նշանակություններ ունի՝ նույնիսկ մարդու հետ համեմատած: Եվ սրանցից պարզ է դառնում, նախ և առաջ, անկասկած, մի բան կենտրոնների աշխատանքի հետ կապված:

Մարդկային մեքենայի զարգացումը և գոյության հարստացումը սկսում է այս մեքենայի նոր և անսովոր գործառույթներից: Մենք գիտենք, որ մարդը ունի հինգ կենտրոն՝ մտածողական, զգացմունքային, շարժական, բնագոյային և սեռական: Յուրաքանչյուրի գերակշռող զարգացումը մյուսների հաշվին արտադրում է խիստ միակողմանի մարդու տեսակ՝ անընդունակ հետագա զարգացման: Բայց եթե մարդը հինգ կենտրոնների աշխատանքը բերում է ներդաշնակության, նա, այսպիսով, «պարփակում է պենտագրամը իր մեջ» և դառնում է ֆիզիկապես հիանալի ավարտուն մարդ: Հինգ կենտրոնների ամբողջական և ճիշտ ֆունկցիան միավորում է նրանց ավելի բարձր կենտրոնների հետ, որոնք ներկայացնում են պակասող սկզբունքը և մարդուն դնում ուղիղ և մշտական կապի մեջ օբյեկտիվ գիտակցության և օբյեկտիվ գիտելիքի հետ:

Եվ, այնուհետև, մարդը դառնում է վեցագագաթ աստղ, այսինքն՝ պարփակվելով կյանքի ցիկլում, անկախ և աբողջական ինքն իր մեջ, նա մեկուսանում է օտար ազդեցություններից կամ պատահական ցնցումներից. Այն մարմնավորում է Սողոմոնի կնիքը:

Տրված օրինակում սինվոլների հաջորդականությունը՝ 2, 3, 4, 5 և 6, մեկնաբանվում է որպես մի գործընթացի համար ընդունելի: Բայց նույնիսկ այս մեկնաբանությունը թերի է, քանի որ սինվոլը երբեք չի կարելի ամբողջովին մեկնաբանել: Այն միայն կարելի է վերապրել այնպես, ինչպես, օրինակ, պետք է վերապրել ինքնագիտակցության գաղափարը:

Մարդու ներդաշնակ զարգացման գործընթացը կարելի է ուսումնասիրել օկտավաների օրենքի տեսանկյունից: Օկտավաների օրենքը սինվոլների մեկ այլ համակարգ է տալիս: Ըստ օկտավաների օրենքի՝ յուրաքանչյուր ամբողջական համակարգ հանդիսանում է դո նոտայի փոխանցումը դեպի հաջորդ օկտավայի դոն՝ իրար հաջորդող տոների շարքի միջոցով: Օկտավայի յոթ հիմնական տոները արտահայտում են յոթի օրենքը: Դրան հավելելով՝ հաջորդ օկտավայի դոն, այսինքն՝ գործընթացի զագաթնակետը, տալիս է ութերորդ աստիճանը: Յոթ հիմնական տոները երկու «ինտերվալների» և «հավելյալ հարվածների» հետ տալիս են իններորդ աստիճանը: Դրանում ներառելով հաջորդ աստիճանի դոն՝ մենք ունենք տաս աստիճան: Վերջին՝ տասերորդ աստիճանը, նախորդի ավարտն է և հաջորդ ցիկլի սկիզբը: Այս եղանակով օկտավաների օրենքը և այն արտահայտող գործընթացի զարգացումը պարունակում է մեկից տաս թվերը: Այստեղ մենք հանգում ենք նրան, ինչը կարելի է սահմանել որպես թվերի նշանաբանություն: Թվերի նշանաբանությունը չի կարելի հասկանալ՝ առանց օկտավաների օրենքը հասկանալու կամ առանց պարզ ընկալման, թե ինչպես են օկտավաները արտահայտվում տասնորդական համակարգում և հակառակը:

Օկուլտիզմի արևմտյան համակարգերում կա մի մեթոդ, որը հայտնի է «տեոսոֆիկ հավելում» անվամբ, այսինքն՝ երկու կամ ավելի թվանշաններից կազմված թվերի սահմանումը այդ թվանշանների գումարով: Այն մարդկանց համար, ովքեր չեն հասկանում թվերի սինվոլիզմը, թվերի սինթեզի այս մեթոդը միանգամայն կամային է և ոչ մի տեղ չի տանում: Բայց այն մարդու համար, ով հասկանում է գոյություն ունեցող ամեն ինչի միասնությունը և ով այս միասնության բանալին ունի, տեոսոֆիկ հավելման մեթոդը խորքային իմաստ ունի, քանի որ այն տարալուծում է հիմնական օրենքներում այն բոլոր տարբերությունները, որոնք կառավարում են այն և որոնք արտահայտված են մեկից տաս թվերում:

Ինչպես նշվում էր նախկինում, նշանաբանության մեջ, ինչպես ներկայացված է, թվերը կապված են որոշակի երկրաչափական պատկերների հետ և փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին: Կաբալայում տառերի նշանաբանությունը նույնպես գործածվում է և տառերի նշանաբանության հետ միասին՝ բառերի նշանաբանությունը: Չորս մեթոդների՝ թվերի նշանաբանության, երկրաչափական պատկերների, տառերի և բառերի միասնությունը տալիս է բարդ, բայց ավելի կատարյալ մեթոդ:

Այնուհետև, գոյություն ունի մոգության, ալքիմիայի և աստղագիտության նշանաբանությունը, ինչպես նաև Տարոտի սինվոլների համակարգը, որը նրանց միավորում է մի արողության մեջ:

Այս համակարգերից յուրաքանչյուրը կարող է ծառայել որպես միասնության գաղափարի փոխանցման միջոց: Սակայն անտեղյակի և տգետի ձեռքերում, որքան էլ նա լի լինի լավ մտադրությամբ, միևնույն սիմվոլը դառնում է «պատրանքի գործիք»: Սրա պատճառն այն է, որ սիմվոլը երբեք չի կարող ունենալ վերջնական և հստակ նշանակություն: Անվերջ բազմազանության միասնության օրենքները արտահայտելով՝ սիմվոլը հենց ինքը պարունակում է անվերջ ասպեկտներ, որոնց տեսանկյունից այն կարող է ուսումնասիրվել, և այն մարդուց, ով մոտենում է այդ սիմվոլին, պահանջվում է այն միաժամանակ դիտարկել տարբեր տեսանկյուններից: Այն սիմվոլները, որոնք տեղադրվում են հասարակ լեզվի բառերի մեջ, դրանցում կարծրանում են, թուլանում են և շատ հեշտորեն դառնում են «իրենց իսկ հականիշները»՝ պահելով իմաստը նեղ, դոգմատիկ շրջանակում, դրան չտալով նույնիսկ առարկայի տրամաբանական ուսումնասիրության ամենահարաբերական ազատությունը: Սրա պատճառը սիմվոլների բառացի ընկալումն է՝ սիմվոլին մեկ իմաստ վերագրելը: Նորից ճշմարտությունը քողարկված է արտաքին ստով և այն բացահայտելու համար հարկավոր է ժխտման հսկայական ջանքեր, որում հենց սիմվոլի գաղափարը անհետանում է: Հայտնի է, թե ինչպիսի պատրանքներ են ստեղծվել կրոնի, ալքիմիայի և հատկապես մոգության սիմվոլներից այն մարդկանց մեջ, որոնք դրանք ընդունել են բառացի և միայն մեկ նշանակությամբ: Միևնույն ժամանակ սիմվոլների ճիշտ ընկալումը չի կարող կասկածի ենթարկվել: Այն խորացնում է գիտելիքը և չի կարող տեսական մնալ, քանի որ այն ուժեղացնում է իրական արդյունքներին հասնելու, գիտելիքի միասնության և գոյության տենչը, այսինքն՝ տենչը դեպի Մեծ գործողություն: Մաքուր գիտելիքը չի կարելի փոխանցել, բայց, սիմվոլների միջոցով արտահայտվելով, այն դրանցով քողարկվում է, չնայած, միևնույն ժամանակ, ովքեր ցանկանում են և գիտեն, թե ինչպես է պետք նայել, այս քողը թափանցիկ է դառնում:

Եվ այս առումով կարելի է խոսել խոսքի նշանաբանության մասին՝ չնայած այս նշանաբանությունը ոչ բոլորի կողմից է հասկացվում: Ասվածի ներքին իմաստը հասկանալը հնարավոր է միայն զարգացման որոշակի մակարդակում և այն ժամանակ, երբ դրան ուղեկցում են համապատասխան ջանքերը և լսողի համապատասխան վիճակը: Իր համար նոր բաներ լսելիս՝ դրանք հասկանալու համար ջանքեր գործադրելու փոխարեն, մարդը սկսում է դրանք կասկածի ենթարկել կամ հերքել՝ դրանց մասին կազմելով այն կարծիքը, որը ինքը ճիշտ է համարում և որը, որպես կանոն, դրանց հետ ոչ մի կապ չունի: Այսպիսով, նա կորցնում է որևէ նոր բան սովորելու բոլոր հնարավորությունները:

Նշանաբանական դարձած խոսքը ընկալելու համար կարևոր է նախկինում ուսումնասիրած լինել այն և արդեն իմանալ, թե ինչպես է պետք լսել: Բառացի հասկանալու ամեն մի ջանք, որտեղ խոսքը գործ ունի օբյեկտիվ գիտելիքի և բազմազանության և միասնության ամբողջության հետ, նախապես ենթակա է ձախողման և շատ դեպքերում տանում է հետագա պատրանքների:

Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել, ժամանակակից կրթության ինտելեկտուալիզմը մարդկանց մղում է, միտում ունի ք փնտրել տրամաբանական

սահմանումներ և տրամաբանական փաստարկներ այն ամենի համար, ինչ լսում են, առանց նկատելու՝ մարդիկ իրենց կապում են իրենց ցանկություններով այնպես, ճիշտ այնպես, ինչպես լինում է այն ասպարեզներում, որտեղ ճշգրիտ սահմանումները հենց իրենց բնույթով անճշգրտություն են մտցնում իմաստի մեջ:

Հետևաբար, մեր մտածողության միտումների պատճառով հաճախ պատահում է, որ մանրամասնություններին վերաբերող ճշգրիտ գիտելիքը հաղորդվելով մարդուն նախքան նա կհասկանա ինչ-որ բանի հիմնական բնույթը, բարդացնում է նրա՝ այս հիմնական բնույթի ընկալումը: Սա չի նշանակում, որ իրական գիտելիքում չկան ճշգրիտ սահմանումներ, հակառակը՝ միայն այնտեղ դրանք կան, բայց դրանք շատ են տարբերվում նրանից, ինչ մենք պատկերացնում ենք: Եվ եթե ինչ-որ մեկը ենթադրում է, որ նա կարող է կրթվել բոլոր մանրամասնությունների ճշգրիտ գիտելիքով, և եթե նա սպասում է նման գիտելիք ձեռք բերել՝ առանց իրեն նեղություն տալով նախապես յուրացնել այն ցուցումները, որոնք տրվել են իր աշխատանքի վերաբերյալ, ապա, նախ և առաջ, նա պիտի հասկանա, որ նա գիտելիք չի ստանա, մինչև բավականաչափ ջանքեր չգործադրի և, որ ինքնին իր ջանքերով նա կարող է ստանալ այն, ինչ փնտրում է: Ոչ ոք նրան երբևէ չի կարող տալ այն, ինչ նա նախկինում չի ունեցել, ոչ ոք չի կարող նրա համար կատարել այն աշխատանքը, որը նա ինքը պիտի անի: Այն ամենն, ինչ մեկ ուրիշը կարող է անել նրա համար, նրան տալիս է աշխատելու խթան, և նշանաբանությունը այս տեսանկյունից, եթե ընկալվի ճիշտ ձևով, մեր գիտելիքի համար նման խթանի դեր է կատարում:

Նախկինում մենք խոսել ենք օկտավաների օրենքի մասին, այն փաստի մասին, որ յուրաքանչյուր գործընթաց, անկախ այն բանից, թե որ աստիճանում է այն կատարվում, միանգամայն որոշվում է յոթ տոնայնության սանդղակի կառուցվածքի օրենքի համաչափ զարգացմամբ: Սրա հետ կապված՝ նշվել է, որ յուրաքանչյուր նոտա, յուրաքանչյուր տոն, եթե դիտարկենք մեկ այլ սանդղակում, նորից մի ամբողջական օկտավա է:

Միի և ֆայի, սիի և դոյի միջև «ինտերվալները», որոնք չի կարելի լցնել գործընթացի էներգիայի ուժգնությամբ և որոնք պահանջում են արտաքին «հարված», այսպես ասած արտաքին օգնություն, հենց այս փաստով միացնում են մի գործընթացը մյուսին: Սրանից հետևում է, որ օկտավաների օրենքը միացնում է տիեզերքի բոլոր գործընթացները, և մեկին, ով գիտի ընթացքի և օկտավայի կառուցվածքի օրենքների սանդղակը, այն ներկայացնում է ամեն ինչի ճանաչման հնարավորությունը և յուրաքանչյուր երևույթ իր հիմնական բնույթով և դրա հետ կապված երևույթների և առարկաների հետ բոլոր փոխհարաբերությունները:

Օկտավայի կառուցվածքի օրենքի ամբողջ գիտելիքը միավորելու համար կա մի որոշակի սիմվոլ, որն ունի շրջանագծի կառուցվածք, որը բաժանված է ինը մասի, որոնք որոշակի հերթականությամբ միացնում են շրջանի ինը գագաթները:

Նախքան բուն սիմվոլի ուսումնասիրությանն անցնելը էական է հասկանալ այն ուսուցանելու որոշակի ասպեկտները, որոնք օգտագործում են այս սիմվոլը, ինչպես

նան այս ուսուցման հարաբերությունը այլ համակարգերին, որը օգտագործում է նշանաբանական մեթոդները գիտելիքի փոխանցման համար:

Այս ուսումնառման փոխհարաբերությունները հասկանալու համար միշտ պետք է հիշել, որ այն ուղիները, որոնք տանում են միասնության ճանաչմանը, դրան մոտենում են այնպես, ինչպես շրջանագծի կենտրոնին մոտեցող շառավիղները. ինչքան ավելի են դրանք մոտենում կենտրոնին, այնքան ավելի են մոտենում մեկը մյուսին:

Որպես արդյունք՝ տեսական պնդումները, որոնք կառուցում են մի շարքի հիմքը, կարելի է բացատրել մեկ այլ շարքի պնդումների տեսանկյունից և հակառակը: Այս պատճառով երբեմն հնարավոր է կազմել երկու հարակից շարքերի միջև որոշակի միջանկյալ շարք: Բայց ամբողջական գիտելիքի և հիմնական շարքերի ընկալման բացակայության դեպքում այսպիսի միջանկյալ ճանապարհները կարող են խառնել շարքերը, առաջացնել խառնաշփոթ և սխալ: Հիմնական շարքերից, քիչ թե շատ հայտնի, կարելի է նշել չորսը՝

- 1) Հրեական
- 2) Եգիպտական
- 3) Պարսկական
- 4) Հնդկական

Ավելին՝ վերջինից մենք գիտենք միայն դրա փիլիսոփայությունը, իսկ առաջին երեքից՝ դրանց տեսության մասերը:

Ի հավելումն սրանց՝ կա Եվրոպայում հայտնի երկու շարք՝ տեոսոֆիա և, այսպես կոչված, Արևմտյան օկուլտիզմ, որոնք առաջացել են հիմնական շարքերի խառնուրդից: Երկու շարքերն էլ ունեն ճշմարտության մասնիկներ, բայց դրանցից ոչ մեկը չունի ամբողջական գիտելիք և, հետևաբար, դրանք գործնականում կիրառելու ջանքերը միայն բացասական արդյունք են տալիս:

Այստեղ ներկայացվող ուսումնառման միանգամայն ինքնուրույն է և անկախ այլ շարքերից և մինչ վերջին ժամանակները միանգամայն անհայտ է եղել: Այլ շարքերի նման, այն օգտագործում է նշանաբանական մեթոդը, և դրա հիմնական սիմվոլներից մեկը այն պատկերն է, որը նշվել է, այսինքն՝ ինը մասի բաժանված շրջանագիծը:

Այս սիմվոլը ունի հետևյալ ձևը

Նկար 44

"Շրջանագիծը բաժանված է ինը հավասար մասերի: Վեց կետերը կապված են մի պատկերով, որը սիմետրիկ է տրամագծին, որը անցնում է շրջանակի մասերի ամենավերին կետով: Այնուհետև, շրջանակի մասերի ամենավերին կետը հանդիսանում է հավասարաչափ եռանկյան գագաթը՝ միացնելով մասերի կետերը, որոնք չեն մտնում բնօրինակ բարդ պատկերի կառուցման մեջ:

Այս սիմվոլը «օկուլտիզմի» ուսումնասիրության մեջ ոչ մի տեղ չկա, ո՛չ գրքերում, ո՛չ բանավոր փոխանցումներում: Սրան այդպիսի կարևորություն էին տվել նրանք, ովքեր անհրաժեշտ էին համարում դրա գաղտնիության պահպանումը:

Գրականության մեջ միայն որոշակի ակնարկներ կան կամ դրանց մասնակի նկարագրությունը<sup>1</sup>: Այսպիսով, հնարավոր է հանդիպել դրա այսպիսի նկարին

Նկար 45

Եվ մյուսը սրա նման

Նկար 46

Միմվոլը, որն ունի շրջանագիծը ինը մասի բաժանած պատկեր, այն գծերով, որոնք կապում են դրանք իրար, արտահայտում է յոթի օրենքը ամբողջականության մեջ երեքի օրենքով:

Օկտավան պարունակում է յոթ տոնայնություն, և ութերորդը հանդիսանում է առաջինի կրկնությունը: Երկու «հավելյալ հարվածների» հետ միասին, որոնք լցնում են «ինտերվալները», միից ֆա, ֆայից դո, կա ինը էլեմենտ:

Այս սիմվոլի ամբողջական կառուցվածքը, որն այն միավորվում է օկտավաների օրենքի ամբողջական արտահայտման հետ, ավելի բարդ է, քան ցուցադրված կառույցը: Բայց նույնիսկ այս կառույցը ցույց է տալիս մեկ օկտավայի ներքին կանոնները և մատնանշում առարկայի հիմնական բնույթի ճանաչման մեթոդը՝ իրենում ուսումնասիրված:

Հետագոտվող առարկայի կամ երևույթի մեկուսացված գոյությունը հավերժական վերադարձող և անընդհատ սահուն գործընթաց է: Շրջանագիծը խորհրդանշում է այս գործընթացը:

Շրջանում առանձին կետերի բաժանումը խորհրդանշում է գործընթացի աստիճանները: Միմվոլը, որպես ամբողջականություն, դոն է, այսինքն՝ ճիշտ և ամբողջական գոյությամբ մի բան: Այն շրջանագիծ է՝ ամբողջական ցիկլ: Այն մեր տասնորդական համակարգի գրոն է. իր մակագրության մեջ այն ներկայացնում է փակ շրջան: Իր մեջ այն պարունակում է իր սեփական գոյության համար բոլոր անհրաժեշտ բաները: Գործընթացում աստիճանների հաջորդականությունը պիտի կապվի 1-ից 9-ը մնացած թվերի հաջորդականության հետ: Միից դո «ինտերվալը» լցնող իններորդ աստիճանի ներկայությունը ամբողջացնում է շրջանը, այսինքն՝ այն փակում է շրջանը, որը այստեղ նորից է սկսվում: Եռանկյան գագաթը փակում է դրա հիմքի երկակիությունը՝ հնարավոր դարձնելով դրա դրևորման բազմաթիվ ձևերը ամենատարբեր եռանկյունիներում այնպես, ինչպես եռանկյան հիմքը անվերջ հատվում է հիմքի գծի հետ: Հետևաբար, շրջանի յուրաքանչյուր սկիզբ և ավարտ գտնվում է եռանկյան գագաթում, այնտեղ, որտեղ սկիզբը և ավարտը հատվում են, որտեղ փակվում է շրջանը, և որը անվերջ պտտվող շրջանում հնչում է այնպես, ինչպես երկու դոյերը օկտավայում: Բայց իններորդ աստիճանն է, որ շրջանը փակում է և նորից

<sup>1</sup> Մ. Կարպի Etude sur les origines de la nature du Zohar գրքում, Փարիզ, 1901, էջ 200-201, կա ինը մասի բաժանված շրջանագծի նկար՝

**(տես շրջանը PDF-ի 294-րդ էջում)**

շրջանի հետևյալ նկարագրությամբ.

Եթե բազմապատկենք 9X9-ը, արդյունքը ցուցադրվում է 8 թվով ձախ կողմում և 1 թվով աջ կողմում, նույն ձևով 9X8-ը տալիս է արդյունք՝ ցուցադրված 7 թվով ձախ կողմում և 2 թվով աջ կողմում, ճիշտ նույնն է 9X6-ը: 9X5-ից սկսված՝ հերթականությունը հակառակն է դառնում, այսինքն՝ միավորներ ցուցադրող թվերը ներկայացվում են ձախ կողմում, իսկ տասնյակներ ցուցադրող թվերը ներկայացվում են աջ կողմում :

սկսում: Հետևաբար, եռանկյունու վերին գագաթում դրան համապատասխան թիվը ինն է, և մնացած կետերը տեղադրված են 1-ից 8 թվերում:

Նկար 47

Շրջանի ներսում բարդ պատկերի ուսումնասիրությանը անցնելուց առաջ՝ մենք պետք է հասկանանք դրա կառուցման օրենքները: Միասնության օրենքները արտացոլված են բոլոր երևույթներում: Տասնորդական համակարգը կառուցված է նույն օրենքների հիմքի վրա: Նոտան ընդունելով որպես մի ամբողջ օկտավա իր մեջ պարունակող միավոր՝ մենք պետք է այն բաժանենք յոթ անհավասար մասերի, որպեսզի հասնենք այս օկտավայի յոթ նոտաներին: Բայց գրաֆիկորեն ներկայացման ժամանակ այս անհավասարությունը հաշվի չի առնվում, և բնութագծի կառուցման համար վերցվում է նախ մեկ յոթերորդը, հետո երկու յոթերորդը, հետո երեք յոթերորդը, չորս յոթերորդը, հինգ յոթերորդը, վեց յոթերորդը և յոթ յոթերորդը: Այս մասերը տասնորդականներով հաշվելով՝ մենք ստանում ենք

$$1/7=0.142857 \dots$$

$$2/7=0.285714 \dots$$

$$3/7=0.428571 \dots$$

$$4/7=0.571428 \dots$$

$$5/7=0.714285 \dots$$

$$6/7=0.857142 \dots$$

$$7/7=0.999999 \dots$$

Ստացված պարբերական տասնորդականների շարքը ուսումնասիրելով՝ մենք անմիջապես տեսնում ենք, որ դրանցից բոլորում, բացի վերջինից, պարբերությունը կազմված է հենց այն վեց թվանշաններից, որոնք ընթանում են հստակ հաջորդականությամբ, այսինքն՝ իմանալով պարբերության առաջին թվանշանը՝ ամբողջությամբ հնարավոր է վերակառուցել ամբողջ պարբերությունը:

Եթե շրջանի մեջ դնենք բոլոր ինը թվերը՝ 1-ից 9-ը և միացնենք այս թվերը, որոնք պարբերության մեջ են ուղիղ գծով այն նույն հաջորդականությամբ, որով թվերը գտնվում են պարբերության մեջ, կախված նրանից, թե որ թվից մենք կսկսենք, մենք կստանանք շրջանագծի միջի պատկերը: 3, 6 և 9-ը թվերը պարբերության մեջ ներառված չեն: Նրանք կազմում են առանձին եռանկյունի՝ սիմվոլի ազատ եռակիությունը:

Օգտագործելով «տեռստֆիկ հավելումը» և վերցնելով պարբերության թվերի գումարը՝ մենք ստանում ենք ինը, այսինքն՝ ամբողջ օկտավա: Նորից յուրաքանչյուր առանձին նոտայում կպարունակվի առանձին օկտավա, որը ենթարկվում է այն նույն օրենքներին, ինչ առաջինը: Նոտաների դիրքը կհամապատասխանի պարբերության թվերին, և օկտավայի տեսքը հետևյալ տեսքը կունենա՝

Նկար 48

9-3-6 եռանկյունը, որը միավորում է պարբերության մեջ չներառված շրջանի երեք կետերը, միացնում է յոթի և երեքի օրենքները: 3-6-9 թվերը ներառված չեն պարբերության մեջ. դրանցից երկուսը՝ 3-ը և 6-ը, համապատասխանում են օկտավայի երկու «ինտերվալներին», երրորդը, այսպես ասած, ավելորդ է և միևնույն ժամանակ այն

փոխարինում է այն հիմնական նոտային, որը չի մտնում պարբերության մեջ: Ավելին, յուրաքանչյուր երևույթ, որը կարող է փոխադարձաբար գործել իրեն նման այլ երևույթների հետ, հնչում է այնպես, ինչպես դո նոտան համապատասխան օկտավայում: Հետևաբար, դոն կարող է դուրս գալ իր շրջանից և կանոնավոր հարաբերության մեջ մտնել մեկ այլ շրջանի հետ, այսինքն՝ մեկ այլ շրջանում կատարել այն դերը, որը տվյալ ցիկլում կատարում են օկտավայում «ինտերվալները» լցնող «հարվածները»: Հետևաբար, այստեղ նույնպես դոն, ունենալով այս հնարավորությունը, 3-6-9 եռանկյունով կապված է օկտավայի այն մասերում, որտեղ առկա են արտաքին աղբյուրների հարվածները: Երեքի օրենքը, այսպես ասած, առանձնանում է յոթի օրենքից, եռանկյունը մտնում է պարբերության մեջ, և այս երկու պատկերների միացումը տալիս է օկտավայի և դրա նոտաների ներքին կառուցվածքը:

Մեր հիմնավորման այս մասում ամբողջովին ճիշտ կլինեք բարձրացնել հետևյալ հարցը՝ ինչու է «ինտերվալներից» մեկը, որը նշանակվում է 3 թվով, գտնվում իր ճիշտ տեղում՝ մի և ֆա նոտաների միջև, և մյուսը, որը նշանակվում է 6 թվով, գտնվում է սոլ և լյա նոտաների միջև, երբ դրա իրական տեղը սիի և դոյի միջև է:

Եթե ուսումնասիրվեին երկրորդ ինտերվալի (6)՝ հենց իր տեղում գտնվելու պայմանները, մենք կունենայինք հետևյալ շրջանը՝

Նկար 49

Եվ փակ ցիկլի ինը էլեմենտները սիմետրիկ կմիավորվեին այսպես՝

Նկար 50

Մեր ստացած բաժանումը

Նկար 51

կարող է տալ միայն հետևյալ խմբավորումը

Նկար 52

այսինքն՝ մի դեպքում x-ը միի և ֆայի միջև և մյուս դեպքում սոլի և լյայի միջև, որտեղ այն անհրաժեշտ չէ: Ինտերվալի՝ սիսալ տեղում տեսանելի տեղադրումը ցույց է տալիս նրանց, ովքեր ընդունակ են տեսնել, թե ինչպիսի «հարված» է հարկավոր սիից դո անցման համար: Մա հասկանալու համար էական է վերհիշել, թե ինչպիսի դեր են կատարում «հարվածները» մարդու մեջ և տիեզերքում կատարվող գործընթացներում: Երբ մենք ուսումնասիրեցինք օկտավաների օրենքի կիրառումը տիեզերքում, «արևից երկիր անցումը» ներկայացվեց հետևյալ կերպ. հարաբերելով երեք օկտավաները ճառագայթմանը՝ նշվեց, որ դոյից սի անցումը՝ ինտերվալի լցումը, տեղի է ունենում արևի օրգանիզմում: Նշվեց, որ տիեզերական օկտավայի հարաբերությունում դոյից սի «ինտերվալին» այս անցումը կատարվում է Բացարձակի կամքով: Տիեզերական օկտավայում ֆայից մի անցումը կատարվում է մեքենայորեն՝ հատուկ մեքենայի օգնությամբ, որը հնարավոր է դարձնում ֆայի համար, որը սկսում է այն, մի շարք ներքին գործընթացներով ձեռք բերել սոլի, որը գալիս է դրանից հետո, հատկանիշները, առանց փոխելու իր նոտան, այսինքն՝ կուտակել ներքին էներգիա ինքնուրույն հաջորդ նոտային՝ միին, անցնելու համար:

Ճիշտ նույն հարաբերությունն է կրկնվում բոլոր ամբողջական գործընթացներում: Ուսումնասիրելով մարդու օրգանիզմում սնուցման գործընթացները և օրգանիզմի ընդունած հեղուկների փոխակերպումը՝ այս գործընթացներում մենք գտնում ենք ճիշտ նույն «ինտերվալները» և «հարվածները»:

### Նկար 53

Ինչպես նախկինում նշել էինք, մարդը ընդունում է երեք տեսակի սնունդ: Դրանցից յուրաքանչյուրը նոր օկտավայի սկիզբն է: Երկրորդ օկտավան, այսինքն՝ օդի օկտավան, միանում է առաջինին, այսինքն՝ սնունդի և հեղուկների օկտավային այնտեղ, որտեղ առաջին օկտավան այլևս չի զարգանում՝ մի նոտայում: Եվ երրորդ օկտավան միանում է երկրորդին այնտեղ, որտեղ երկրորդ օկտավան այլևս չի զարգանում՝ մի նոտայում:

Բայց պետք է հասկանալ, որ ինչպես քիմիական շատ գործընթացներում, միայն ճիշտ քանակությամբ հեղուկները, բնության կողմից որոշված, տալիս են անհրաժեշտ որակի բաղադրությունները, այսպիսով մարդկային օրգանիզմում «երեք տեսակի սնունդը» պետք է խառնել ճշգրիտ չափաբաժիններով:

Ուտելիքի օկտավայի գործընթացի վերջին նյութը սին է («ջրածինը»՝ 12-րդը երրորդ սանդղակում), որին անհրաժեշտ է «հավելյալ հարված» նոր դոյի անցնելու համար: Բայց քանի որ երեք օկտավաներն էլ մասնակցել են այս նյութի արտադրմանը, դրանց ազդեցությունը նաև զգացվում է վերջնական արդյունքում՝ որոշելով դրա որակը: Որակը և քանակը կարելի է կարգավորել՝ կարգավորելով օրգանիզմում ստացած սննդի երեք տեսակները: Միայն սննդի երեք տեսակներում միասնության և ներդաշնակության համապատասխանության դեպքում, ուժեղացնելով կամ թուլացնելով գործընթացի տարբեր մասերը, կարելի է ստանալ անհրաժեշտ արդյունքը:

Բայց էական է հիշել, որ ուտելիքը կարգավորելու ոչ մի ինքնակամ ջանք, բառի բուն իմաստով, կամ շնչառություն չի կարող հանգեցնել ցանկալի ավարտի, մինչև կատարողը չիմանա, թե ինչ է նա կատարում և ինչու, և այն, թե ինչպիսի արդյունք կտա:

Եվ ավելին, եթե նույնիսկ մարդուն հաջողվի կարգավորել երկու բաղադրիչների գործընթացը՝ սննդի և շնչառության, սա նորից բավարար չէ, քանի որ կարևոր է իմանալ, թե ինչպես կարգավորել սննդի երրորդ տարբերակը՝ «տպավորությունները»:

Հետևաբար, նախքան նույնիսկ ներքին գործընթացների վրա գործնականորեն ազդելը՝ էական է հասկանալ օրգանիզմ մտնող նյութերի ճշգրիտ փոխադարձ հարաբերությունը, հնարավոր «հարվածների» բնույթը և նոտաների փոխակերպումը կառավարող օրենքները: Ամեն տեղ այս օրենքները նույնն են: Մարդուն ուսումնասիրելով՝ մենք ուսումնասիրում ենք տիեզերքը, տիեզերքը ուսումնասիրելով՝ մենք ուսումնասիրում ենք մարդուն:

«Բացարձակ լուսին» տիեզերական օկտավան, ըստ երեքի օրենքի, բաժանված է երեք ստորադաս օկտավաների: Այս երեք օկտավաներում տիեզերքը նման է մարդուն՝ միևնույն «երեք տարբերակները», միևնույն երեք հարվածները:

Մինչդեռ ճառագայթման տիեզերական օկտավայում՝ այնտեղ, որտեղ հայտնվում է ֆայից մի ինտերվալը, դիագրամում նշված են «մեքենաներ», որոնք այնտեղ գտնվում են այնպես, ինչպես մարդու մարմնում:

Միից ֆա անցումը կարելի է ուրվագծով ներկայացնել այսպես. տիեզերական ֆան մտնում է այս մեքենայի մեջ այնպես, ինչպես ավելի ցածր տարբերակի ուտելիքը և սկսում է փոփոխությունների իր ցիկլը: Հետևաբար, մեքենայում սկզբում այն հնչում է ինչպես դո: Տիեզերական օկտավայի սուլի նյութը ծառայում է որպես մի նյութ, որը մտնում է միջին տարբերակի մեջ այնպես, ինչպես օդը շնչառության մեջ, որը օգնում է մեքենայի միջի ֆա նոտային անցում կատարել մի նոտայի: Այս սուլը, մտնելով մեքենա, նույնպես հնչում է ինչպես դո: Նյութը, որը մենք այժմ ստացել ենք, միավորում է տիեզերական լյան նյութի ավելի բարձր տարբերակի հետ, որը մեքենայի ավելի բարձր տարբերակն է մտնում որպես դո:

Ինչպես տեսնում ենք սրանից, հետևյալ նոտաները՝ լյա, սոլ, ֆա, ծառայում են որպես մեքենայի սնունդ: Իրենց հաջորդականությամբ, ըստ երեքի օրենքի, լյան կլինի ակտիվ տարրը, սուլը՝ չեզոք և ֆան՝ պասիվ: Ակտիվ բաղադրիչը, ռեակցիա առաջացնելով պասիվի հետ (այսինքն՝ միանալով դրան չեզոք բաղադրիչի միջոցով), տալիս է որոշակի հստակ արդյունք: Միմյուրի ձևով այն այսպես է ներկայացված՝

Նկար 54

Նակր 55

Այս սիմվոլը ցույց է տալիս, որ ֆա նյութը, խառնվելով լյա նյութին, առաջացնում է սոլ նյութը: Եվ քանի որ այս գործընթացը շարունակվում է օկտավայում, զարգանալով այնպես, ինչպես ֆա նոտայի մեջ, հետևաբար, հնարավոր է ասել, որ ֆան, առանց իր բարձրությունը փոխելու, ձեռք է բերում սուլի հատկանիշները:

Այն, ինչ ասվել է ճառագայթման օկտավաների և մարդու օրգանիզմում սննդի օկտավաների մասին, ուղիղ կապ ունի ինը մասի բաժանված շրջան պարունակող սիմվոլի հետ: Այս սիմվոլը, որպես հիանալի սինթեզի արտահայտում, իր մեջ պարունակում է այն օրենքի բոլոր տարրերը, որը ինքը ներկայացնում է, և դրանից կարելի է քաղել և դրա օգնությամբ փոխանցել այն ամենը, ինչ կապված է այս օկտավաների հետ և շատ ավելին»:

Գ.-ն շատ անգամ և շատ առիթներով վերադառնում էր էննեագրամին:

«Յուրաքանչյուր ամբողջական միասնություն, յուրաքանչյուր օրգանիզմ, յուրաքանչյուր բույս էննեագրամ է», -ասում էր նա: «Բայց այս էննեագրամներից ոչ բոլորը ունեն ներքին եռանկյունի: Ներքին եռանկյունին նշանակում է ավելի բարձր տարրերի ներկայություն՝ ըստ տրված օրգանիզմում «ջրածինների» սանդղակի: Այս ներքին եռանկյունին կա այնպիսի բուսերի մեջ, ինչպիսիք են կանեփը, կակաչը, գայլուկը, թեյը, սուրճը, ծխախոտը և շատ ուրիշ բույսերում, որոնք որոշակի դեր են կատարում մարդու օրգանիզմում: Այս բույսերի ուսումնասիրությունը մեզ համար շատ ավելին կարող է բացահայտել էննեագրամների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ պետք է հասկանալ, որ էննեագրամը համընդհանուր սիմվոլ է: Ամբողջ գիտելիքը կարելի է ներառել էննեագրամում և այն կարելի է մեկնաբանել էննեագրամի միջոցով: Այսպիսով, այն ամենն, ինչ մարդ կարող է դնել էննեագրամի մեջ, նա իրականում գիտի, այսինքն՝ հասկանում է: Այն, ինչ նա չի կարող դնել էննեագրամի մեջ, նա չի հասկանում: Այն

մարդու համար, ով գիտի, թե ինչպես այն օգտագործել, էննեագրամը ամբողջությամբ անպետք է դարձնում գրքերը և գրադարանները: Ամեն ինչ կարելի է ներառել և կարդալ էննեագրամում: Մարդը կարող է անապատում մենակ լինել և ավազի վրա հետևել էննեագրամին և դրանում կարդալ տիեզերքի հավերժական օրենքները: Եվ ամեն անգամ նա կարող է որևէ նոր բան սովորել, մի բան, որը նա նախկինում չգիտեր:

Եթե հանդիպեն երկու մարդ, ովքեր եղել են տարբեր դպրոցներում, նրանք կնկարեն էննեագրամ և դրա օգնությամբ միանգամից կարող են սահմանել, թե նրանցից ով շատ գիտի, և ով, հետևաբար, որ աստիճանին է կանգնած, այսինքն՝ ով է ավելի մեծ, ով է ուսուցիչը և ով է աշակերտը: Էննեագրամը համընդհանուր լեզվի հիմնական հիերոգլիֆն է, որն ունի այնքան տարբեր իմաստներ, որքան մակարդակներ ունեն մարդիկ:

Էննեագրամը անվերջ շարժում է, այն նույն անվերջ շարժումը, որը մարդիկ փնտրել են հնագույն ժամանակներից և երբեք չեն կարողացել գտնել: Եվ պարզ է, թե ինչու նրանք չեն կարողացել գտնել անվերջ շարժումը: Նրանք փնտրում էին իրենցից դուրս այն, ինչ իրենց մեջ էր, և նրանք փորձում էին կառուցել անվերջ շարժման մեքենան այնպես, ինչպես կառուցված է մեքենան, մինչդեռ իրական անվերջ շարժումը մեկ այլ անվերջ շարժման մաս է և չի կարող ստեղծվել դրանից անջատ: Էննեագրամն անվերջ շարժման սխեմատիկ բնութագրիծն է, այսինքն՝ հավերժական շարժման: Բայց իհարկե կարևոր է իմանալ, թե ինչպես կարդալ այս բնութագրիծը: Այս սիմվոլի ընկալումը և դրա օգտագործելու ունակությունը մարդուն տալիս է շատ մեծ ուժ: Այն անվերջ շարժում է և այն նաև ալքիմիկների փիլիսոփայական քարն է:

Էննեագրամի գիտելիքը երկար ժամանակ գաղտնի է պահվել և, այսպես ասած, եթե այն բոլորին հասանելի է այժմ, այն ընդամենը թերի և տեսական ձևով է, որից ոչ մեկ չի կարող գործնական օգուտ ունենալ՝ առանց այն մարդու ցուցումների, ով գիտի այն:

Ավելի ուշ՝ 1922-ին, երբ Գ.-ն կազմակերպեց իր՝ Ֆրանսիայի ինստիտուտը և երբ նրա ուսանողները սովորում էին պար և դերվիշի վարժություններ, Գ.-ն նրանց ցուցադրեց «էննեագրամի շարժումների» հետ կապված վարժություններ: Այն դահլիճի հատակին, որտեղ վարժությունները տեղի էին ունենում, նկարված էր մեծ էննեագրամ և աշակերտները, ովքեր մասնակցում էին վարժություններին կանգնում էին այն կետերի վրա, որտեղ նշված էին 1-ից 9-ը թվերը: Հետո շատ հետաքրքիր ձևով նրանք սկսում էին շարժվել թվերի պարբերության ուղղությամբ՝ հանդիպման կետում մեկը մյուսի հետևից շրջվելով, այսինքն՝ այն տեղերում, որտեղ գծերը հատվում էին էննեագրամի մեջ:

Այդ ժամանակ Գ.-ն ասեց, որ ըստ էննեագրամի շարժվելը իր՝ «Մոգերի պայքարը» բալետում կարևոր տեղ կգրադեցնի: Նա նաև ասեց, որ առանց այս վարժությունները կատարելու, առանց դրանցում ինչ-որ տեղ զբաղեցնելու՝ համարյա անհնարին էր հասկանալ էննեագրամը»:

«Հնարավոր է ընկալել էննեագրամը շարժմամբ», - նա ասեց: «Այս շարժումների ռիթմը կենթադրի անհրաժեշտ գաղափարները և կպահի անհրաժեշտ լարվածությունը. առանց դրանց անհնար է զգալ, թե ինչն է ամենակրևորը»:

«Կար էննեագրամի ևս մեկ նկար, որը կատարվել էր իր ցուցումներով Կոստանդնուպոլսում 1920-ին: Այս էննեագրամում պատկերված էին Ապոկալիպսի չորս գագանները՝ ցուլը, առյուծը, մարդը և արծիվը, և դրանց հետ աղավնին: Այս հավելյալ սիմվոլները կապված էին «կենտրոններով»:

Էննեագրամի նշանակությունը՝ որպես համընդհանուր սիմվոլի խոսակցությունների հետ կապված գաղափար, Գ.-ն նորից խոսեց համընդհանուր «փիլիսոփայական» լեզվի գոյության մասին»:

«Երկար ժամանակ մարդիկ փորձել են ստեղծել համընդհանուր լեզու, -նա ասեց, -և այստեղ էլ, ինչպես շատ դեպքերում, նրանք փնտրում են մի բան, որը երկար ժամանակ գտնված է եղել, և փորձում են մտածել և ստեղծել մի բան, որը հայտնի է և գոյություն ունի երկար ժամանակ: Նախկինում ես ասել էի, որ կա ոչ թե մեկ, այլ երեք համընդհանուր լեզու, ավելի ճիշտ՝ երեք աստիճան: Առաջին աստիճանը մարդկանց համար արդեն հնարավոր է դարձնում իրենց սեփական մտքերն արտահայտել և հասկանալ ուրիշների մտքերը հարաբերված այն բաների հետ, որոնց համար հասարակ լեզուն անկատար է»:

«Ի՞նչ հարաբերության մեջ են այս լեզուները արվեստի նկատմամբ, - հարցրեց ինչ-որ մեկը, - և մի՞թե արվեստն ինքը չի հանդիսանում այդ «փիլիսոփայական լեզուն», որնք ուրիշները փնտրում են մտովի»:

«Ես չգիտեմ, թե Դուք ինչ արվեստի մասին եք խոսում», - ասեց Գ.-ն: «Կա արվեստ և արվեստ: Անկասկած Դուք նկատել եք, մեր դասախոսությունների և խոսակցությունների ընթացքում մարդիկ ինձ տարբեր արվեստի հետ կապված հարցեր են տվել, բայց ես միշտ խուսափել եմ այս թեմայի շուրջ խոսակցություններից: Դրա պատճառն այն է, որ արվեստի մասին բոլոր հասարակ խոսակցությունները ես համարում եմ անիմաստ: Մարդիկ խոսում են մի բանի մասին, բայց ենթադրում են մեկ այլ բան, և նրանք գաղափար չունեն, թե ինչից ինչ են ենթադրում: Միևնույն ժամանակ միանգամայն անօգուտ է փորձել բացատրել առարկաների իրական փոխհարաբերությունը մի մարդու, ով ինքն իր մասին Ա, Բ, Գ չգիտի, այսպիսով միգուցե ես Ձեզ հետ կարող եմ խոսել նույնիսկ արվեստի մասին:

Նախ և առաջ, դուք պետք է հիշեք, որ կա երկու տեսակի արվեստ՝ մեկը մյուսից բավականին տարբեր՝ օբյեկտիվ արվեստ և սուբյեկտիվ արվեստ: Այն ամենն, ինչ դուք գիտեք, այն ամենը, ինչ դուք անվանում եք արվեստ՝ սուբյեկտիվ արվեստն է, այսինքն՝ այն, ինչ ես ընդհանրապես արվեստ չեմ անվանում, քանի որ միայն օբյեկտիվ արվեստն էմ ես անվանում արվեստ:

Սահմանելն այն, ինչ ես կոչում եմ օբյեկտիվ արվեստ, առաջին հերթին դժվար է, որովհետև դուք վերագրում եք սուբյեկտիվ արվեստին օբյեկտիվ արվեստի հատկանիշներ, և երկրորդը, երբ դուք հանդիպում եք օբյեկտիվ արվեստի գործերի, դուք դրանք ընդունում եք նույն մակարդակի վրա, ինչ սուբյեկտիվ արվեստի գործերը:

Ես կփորձեմ պարզ արտահայտել իմ գաղափարը: Դուք ասում եք՝ արվեստագետը ստեղծում է: Ես դա ասում եմ միայն օբյեկտիվ արվեստի հետ կապված: Սուբյեկտիվ արվեստի վերաբերյալ ես ասում եմ, որ նրա միջոցով է «այն ստեղծվում»: Դուք չեք

տարբերում խորանք, բայց ահա թե որտեղ է գտնվում ամբողջ տարբերությունը: Ավելին, դուք սուբյեկտիվ արվեստին վերագրում եք անփոփոխ գործողություն, այսինքն՝ դուք ակնկալում եք, որ սուբյեկտիվ արվեստի գործերը նույն տպավորությունը պիտի թողնեն բոլորի վրա: Օրինակ՝ դուք կարծում եք, որ թաղման քայլերգը պիտի բոլորի մոտ առաջացնի տխուր և հանդիսավոր մտքեր, և որ պարային երաժշտությունը, օրինակ՝ կոմարինականը, կառաջացնի ուրախ մտքեր: Բայց իրականում դա ընդահնրապես այդպես չէ: Ամեն ինչ կախված է ասոցիացիայից: Եթե ինձ հետ մեծ դժբախտություն պատահած օրը ես լսեմ ինչ-որ աշխույժ մեղեդի, իմ հետագա ամբողջ կյանքում այն իմ մեջ կարթնացնի տխուր և ճնշող մտքեր: Եվ եթե այն օրը, երբ ես հատկապես ուրախ եմ, ես լսում եմ տխուր մեղեդի, այս մեղեդին միշտ կարթնացնի ուրախ մտքեր: Եվ այսպես է մնացած ամեն ինչի հետ:

Օբյեկտիվ արվեստի և սուբյեկտիվ արվեստի տարբերությունը այն է, որ օբյեկտիվ արվեստում արվեստագետը իրոք «ստեղծում» է, այսինքն՝ նա պատրաստում է այն, ինչ մտադրվել էր, նա իր աշխատանքում դնում է այն գաղափարները և զգացմունքները, որոնք նա ցանկանում է դնել դրա մեջ: Եվ այս աշխատանքի գործողությունը մարդու վրա միանգամայն հստակ է. նրանք, իհարկե, կախված իրենց մակարդակից, ստանում են նույն գաղափարները և զգացմունքները, որոնք արվեստագետը ցանկացել էր փոխանցել նրանց: Ոչինչ պատահական չի կարող լինել օբյեկտիվ արվեստի ո՛չ ստեղծման, ո՛չ էլ տպավորությունների մեջ:

Սուբյեկտիվ արվեստում ամեն ինչ պատահական է: Արվեստագետը, ինչպես արդեն ասել էի, չի ստեղծում, նրա միջոցով «այն ստեղծում է իրեն»: Սա նշանակում է, որ նա գաղափարների, մտքերի և տրամաբանությունների իշխանության տակ է, որոնք նա ինքը չի հասկանում և որոնք նա չի կարող կառավարել: Դրանք նրան կառավարում են և իրենց արտահայտում այս կամ այն ձևով: Եվ եթե պատահականորեն դրանք ընդունում են այս կամ այն ձևը, այս ձևը հենց պատահականորեն մարդու մոտ առաջացնում է այս կամ այն գործողությունը՝ կախված նրա տրամադրությունից, ճաշակից, սովորություններից, հիպնոզի բնույթից, որի տակ նա ապրում է և այլն: Ոչ մի անփոփոխ բան չկա. այստեղ ոչինչ հստակ չէ: Օբյեկտիվ արվեստում ոչ մի անորոշ բան չկա»:

«Մի՞ թե արվեստը չի անհետանա այսչափ հստակ լինելով», - հարցրեց մեզնից մեկը: «Եվ մի՞ թե որոշակի անորոշությունը, անհասանելիությունը հենց այն չէ, ինչ տարբերում է արվեստը, ասենք, գիտությունից: Եթե հանենք այս անորոշությունը, եթե դուք անտեսեք այն փաստը, որ արվեստագետն ինքը չգիտի, թե ինչ նա կսատնա կամ ինչ տպավորություն կթողնի իր աշխատանքը մարդկանց վրա, ապա այն կլինի «գիրք», այլ ոչ թե արվեստ»: «Չգիտեմ, թե ինչի մասին եք խոսում», - ասեց Գ.-ն: «Մենք ունենք տարբեր չափորոշիչներ. ես արվեստի արժեքը չափում եմ դրա գիտակցությամբ, իսկ դուք արվեստի արժեքը չափում եք դրա ենթագիտակցությամբ: Մենք չենք կարող միմյանց հասկանալ: Օբյեկտիվ արվեստի գործը պիտի «գիրք» լինի, ինպես Դուք այն անվանում եք. միակ տարբերությունն է այն է, որ արվեստագետը փոխանցում է իր մտքերը ոչ թե ուղիղ բառերի, նշանների կամ հիերոգլիֆների միջոցով, այլ որոշակի

զգացմունքներով, որոնք նա առաջացնում է գիտակցաբար և կանոնավոր կերպով՝ գիտակցելով, թե ինչ է նա անում և ինչու է անում»:

«Լեզենդներ են, - ասեց ներկաներից մեկը, - պահպանվել հին հունական տաճարներում աստվածների արձանների վերաբերյալ, օրնակ՝ Ջեսի արձանը Օլիմպիայում, որը բոլորի վրա թողնում է ճիշտ և միշտ նույն տպավորությունը»:

«Միանգամայն ճիշտ է, - ասեց Գ.-ն, - և նույնիսկ այն փաստը, որ այսպիսի պատմություններ գոյություն ունեն, ցույց է տալիս, որ մարդիկ հասկանում էին իրական և ոչ իրական արվեստի տարբերությունը, հենց սրանում առկա անփոփոխ կամ պատահական գործողությունը»:

«Կարո՞ղ եք նշել օբյեկտիվ արվեստի այլ գործեր»: Ժամանակակից արվեստում կա՞ մի բան, որ կարելի է կոչել օբյեկտիվ արվեստ»: «Ե՞րբ է ստեղծվել արվեստի վերջին գործը»: Համարյա բոլոր ներկաները սկսեցին Գ.-ին տալ այսպիսի հարցեր:

«Նախքան սրա մասին խոսելը,- ասեց Գ.-ն, - պետք է հասկանալ սկզբունքները: Եթե դուք ըմբռնեք սկզբունքները, դուք ինքներդ կարող եք պատասխանել այս հարցերին: Բայց եթե չըմբռնեք, իմ ասածները ձեզ ոչինչ չեն բացատրի: Հենց սրա մասին է ասվել՝ նրանք կտեսնեն իրենց աչքերով և չեն զգա, կլսեն իրենց ականջներով, բայց չեն հասկանա»:

Ես ձեզ կցիտեմ միայն մեկ օրինակ՝ երաժշտությունը: Օբյեկտիվ երաժշտությունը ամբողջությամբ հիմնված է «ներքին օկտավաների» վրա: Եվ այն կարող է ստանալ ոչ միայն որոշակի հոգեբանական արդյունքներ, այլ նաև որոշակի ֆիզիկական արդյունքներ: Կարող է լինել այնպիսի երաժշտություն, որը կարող է սառեցնել ջուրը: Կարող է լինել այնպիսի երաժշտություն, որը անմիջապես կսպանի մարդուն: Երիքովի պատերը երաժշտության միջոցով քանդելու աստվածաշնչյան լեզենդը հենց օբյեկտիվ երաժշտության լեզենդ է: Սովորական երաժշտությունը պատեր չի քանդի, բայց օբյեկտիվ երաժշտությունը անշուշտ դա կարող է անել: Եվ այն կարող է ոչ միայն քանդել, այլև՝ կառուցել: Օրֆեյի լեզենդում օբյեկտիվ երաժշտության ակնարկներ կան, քանի որ Օրֆեյը երաժշտության միջոցով գիտելիք էր հաղորդում: Արևելքում օձ վարժեցնողների երաժշտությունը մոտ է օբյեկտիվ երաժշտությանը, իհարկե, շատ պրիմիտիվ ձևով: Հաճախ այն ընդամենը մեկ նոտա է, որը երկար պահվում է՝ շատ քիչ բարձրանալով կամ իջնելով, բայց այս մեկ նոտայում «ներքին օկտավաները» անընդհատ շարունակվում են և «ներքին օկտավաների» մեղեդիները անլսելի են ականջների համար, բայց զգացվում են զգայական կենտրոններով: Եվ օձը լսում է այս երաժշտությունը, ավելի ճիշտն ասած, զգում է այն, ենթարկվում: Մարդը կենթարկվի նույն երաժշտությանը՝ միայն մի փոքր ավելի բարդ տարբերակին:

Այսպիսով տեսնում եք, որ արվեստը միայն լեզու չէ, այլ՝ ավելի մեծ բան: Եվ եթե դուք ի մի բերեք այն ինչ նոր ասեցի և այն, ինչ ավելի վաղ ասվել էր մարդու գոյության տարբեր մակարդակների մասին, դուք կհասկանաք, թե ինչ էր ասվում արվեստի մասին: Մեքենայական մարդկությունը բաղկացած է համար մեկ, համար երկու և համար երեք մարդուց, և նրանք, իհարկե, կարող են միայն սուբյեկտիվ արվեստ ունենալ: Օբյեկտիվ արվեստը առնվազն պահանջում է օբյեկտիվ գիտակցության փայլատակումներ. այս

փայլատակումները պատշաճ կերպով հասկանալու և դրանք ճիշտ օգտագործելու համար անհրաժեշտ է հսկայական ներքին միասնություն և հսկայական ինքնակառավարում»: